

Հ. ԳԱՐԵՎԱՆ



ԱՐԵՆԱԿԱՏԻ ԽԱՅՐԵՑՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԱ ԱԿԱԴԵՄԻԱ ԱՐԵՎԱԿԱՐԱԿԱՆ

ՀԵՐԱԿԱ

10 37

31 JAN 2018

Վ. ԴԱՐՅԱՆ

296.5

# ԱԼՓԻՆԻՍԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ

ՃՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈԶ ԺՈՂԿՈՄ-  
ԽՈՐՀԻՆ ԿԻՑ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ՍՊՈՐՏԻ  
ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵՅԻ



ՀԱԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937

Լեզվ. խմբագիր՝ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Տեխ. խմբագիր՝ Լ. ՌԴՅԱՆՑՅԱՆ  
Հրամ. № 4220

## ԱԼՊԻՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի ալպինիզմը բացառապես Խորհրդային իշխանության ծնունդ է: Նրա սկիզբը պետք է համարել 1929 թվականը, յերբ առաջին անգամ փորձ արվեց մեղ մոտ ևս կազմակերպել լեռնային արշավներ:

Սակայն ալպինիզմն սկսեց ավելի ծավալվել և մասսայական բնույթ ստանալ 1934 թվականից, յերբ կազմակերպվեց առաջին աստղաձև արշավը գեպի Արագած լեռը, և ապա՝ 1935 թվականին, յերբ կազմակերպվեց, առաջին անգամն ալպինիզմի պատմության մեջ, 1000 հոգու մասսայական արշավ՝ դարձյալ գեպի Արագած լեռը:

Այնուհետև հետագա տարիներում կատարվեցին մի շարք լեռնային վերելքներ՝ գեպի Աղմաղանի լեռները, Մայմին, Հաղիս, Արտյի սարը, գեպի Ելբրուսի գաղաթը և այլն:

Մինչև հիմա կատարված ալպինիստական արշավների թերությունը յեղել է այն, վոր լուրջ ուշադրություն չի դարձվել ալպինիզմի տեխնիկայի ուսումնակրության վրա:

Իսկ այդ ամենակարեվորն է ալպինիզմի մեջ:

Ալպինիզմը վոչ միայն լեռնային սպորտ և կամ տուրիստական սպորտ լեռներում, այլ նաև գիտական գործունեություն և բարձր լեռնային շրջապատճեմ. Ալպինիզմի նպատակը միայն սպորտը չե (գագաթներ բարձրանալը, դահուկային և սահնակային սպորտը և այլն), այլ նա հետապնդում է նաև գիտական և գործ-



1-37219

Գլավիթի լուսադրություն № 10—9227

Տիրամ 2000

Յերևան, Սեգան-Քանաքեռշենի ապարան:

նական խնդիրներ՝ լեռների ուսումնասիրություն յերկը բարեանական, բուսաբանական և կենդանաբանական տեսակետից, սառցագաշտերի ուսումնասիրություն, բարձր լեռնային ողերևույթաբանական յերևույթների ուսումնասիրություն, քարտեզներ կազմել և այլն,

Բարձր լեռներ բարձրանալը կապված է մեծ դժվարությունների և կյանքը վտանգի յենթարկելու հետ. այդ և պատճառը, վոր պահանջվում է ուժերի մեծ լարում, դիմացկունություն (առանձնապես սրտի—անոթային սիստեմի և այլն), գնականություն, ճարշապըկություն (Ահա թե ինչու ալպինատից պահանջվում է նախնական լուրջ մարդում (արենիբովկա), ալպինիստական տեխնիկայի տեսական և գործնական հիմնական ծանոթություն:

Մի շաբք լեռներում (Վրաստանի լեռներ, Կովկասյան լեռնաշղթա, Պամիր և այլն) զագաթների նըգամում այնքան բարդ տեխնիկա և վարժվածություն է պահանջում, վոր նույնիսկ հաճախ փորձված ալպինիստներն անգամ տեղանքին լավ ծանոթ ուղեկցողներ պետք է ունենան:

Մեր ալպինիստական կադրերը յերիտասարդ են և դեռևս լավ ծանոթ չեն լեռնային տեխնիկային, մեր յերկրին, մեր լեռների առանձնահատկություններին: Չեն տիրապետում նաև ալպինիստական մինիմումին, չգիտեն կողմնորոշվել տեղանքի վրա տարվա տարրեր ժամանակներին, ծանոթ չեն ալպինիստական հանդերձանքին՝ յերթային, դաշտային և մասնագիտական իրերի գործածությանը և նպատակահարմար դասավորությանն արշավի ընթացքում, վորն անչափ անհրաժեշտ է ամեն մի ալպինիստի:

Այս փոքրիկ գրքույկը միայն մասսամբ կարող է ոժանդակել այդ ինդիբներում սկսնակ ալպինիստին:

Հայկական ԽՍՀ Ժողկոմինորնին կից Ֆիզկուլտուրայի լեկ սպորտի գործերի Կոմիտե

## 1. ԱԼՊԻՆԻՍՏԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ

Ալպինիզմը պրոլետարական տուրիզմի անրաժանելի ճյուղերից մեկն ե: Այդ պատճառով ել պարզ ե, վոր նախքան լեռան գագաթը բարձրանալը, ժայռերըն ու անանցանելի ձորերն ի վեր մագլցելը, պետք ե կատարել վորոշ ճամբորդություն նաև խճուղիներով, դաշտերով, անտառներով, անցնել գետեր, լճակներ և այլն:

Այսպիսի ճամբորդությունը պահանջում է ալպինիստից լուրջ պատրաստություն՝ հանդերձանքի, յերթային իրերի, գիշերիլու, սնվելու, բնության տարերքից պաշտպանվելու իրերի, լեռներ մագլցելու, սառուցի վրայով քայլելու և այլ անհրաժեշտ իրերի ու գործիքների: Ամեն մի իրի պակասությունն աղդում է ալպինիստի տրամադրության վրա:

Առաջին հերթին ալպինիստը պետք է հատուկ ուշադրություն դարձնի հանդերձանքի ճիշտ ոգտագործման և հարմար դասավորության վրա, հաշվի առնելով տարվա տարբեր յեղանակները կամ այն, թե որվա վոր ժամին և քայլելու: Ամառը՝ կեսորին քայլելիս պետք ե թեթի հագնվել, իսկ ձմեռը, ընդհակառակը, պետք ե շատ տաք հագնվել և, առանց փորձված ալպինիստի մանրամասն կոնսուլտացիայի, քաղաքից չպետք ե դուրս գալ:

Ալպինիստը ճամբորդության ժամանակ պետք է ապահովված լինի տաք շորերով. նա պետք է ունենա-


ճանապարհորդական հատուկ շալվար, տաք վերնազգեստ, զլխարկ, հատուկ կոշիկներ, գուլպաներ, ձեռնոցներ, տաք սպիտակեղեն և այլն: Յուրաքանչյուրից պետք է ունենալ մի քանի զույգ՝ համաձայն այն մարդուտի, վորն ընտրել ե ալպինիստական խումբը կամ անհատ ալպինիստը:

Այդ գեղքերում ավելի լավ ե դիմել տեղի ալպինիստական կազմակերպությանը և սպառիչ հրահանգներ ու ցուցումներ ստանալ նրանից, հակառակ գեղքում վոչ մի ալպինիստական խմբի չպետք ե թույլատըրվի լիոները զնալ կամ ճանապարհորդության գուրք գալ: Ալպինիստի հանդերձանքը վոչ պետք և շատ լինի, վոր ծանրաբեռնի նրան քայլելու ժամանակ, և վոչ ել այնքան քիչ, վոր ալպինիստը ցրտից չկարողանա պաշտպանվել:

Ավելորդ իրերը յերթի ժամանակ ջղային դրություն են ստեղծում ալպինիստի համար և ավելորդ հոգնածություն պատճառում:

Այդ պատճառով պետք ե յերթից առաջ հատուկ ուշադրություն դարձնել հանդերձանքի ճիշտ ընտրության և հարմար դասավորության վրա: Ամեն մի արպինիստ, յերբ պատրաստվում ե լիոնային արշավի, պետք և տպահովված լինի յերային, դաշտային լիվ մասնագիտական իրերով:


Յերային իրեր առելով հասկանում ենք՝ մեջքի պայուսակ (ոռեկզակ), կերակրի աման (ավելի լավ և ունենալ մի ալյումինե ափսե), բաժակ, տերմոս (կամ մի այլ ջրաման), զդար, դանակ, գաշտային պայուսակ, սանիտարական իրեր, հագուստ և այլն:



ՆԿ. № 1. ԱԼՊԻՆԻՍՏԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ

1. Սառցահատ. 2. Ակնոցներ. 3. Յերկաթյա ճանկեր. 4. Յերկաթյա ճանկերը կոշիկների վրա ամրացնելու ձեռ. 5. Պարան (տրոս). 6. Պայուսակ (ոռեկզակ):

Դաւային իրեր՝ վրան, քնելու պարկեր, վերմակւներ, լամպ և այլն:



ՆԿ. № 2. ՎԱՅՐԵԶՔ ՊԱՐԱՆԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ

Պարանի ճիշտ դրությունն իջնելիս:

Մասնագիտական իրեր՝ սառցահատ, յերկաթյանանկեր, ակնոցներ, ալպինիստական պարան, պրիմուս և այլն:

Ահա այս բոլորը միասին վերցրած՝ կազմում են ալպինիստի հանդերձանքը, առանց վարի չի կարելի գնալ լեռները, մաքառել բնության տարերքի դեմ, հաղթահարել նրա քմահաճույքները:

## 2. ԱԼՊԻՆԻՍՏԻ ՀԱԳՈՒՍԸԸ

Ալպինիստը պետք է ունենա հատուկ կարած հագուստ, վորը համապատասխանի լեռնային պայմանների բոլոր պահանջներին: Այդ դժվար չի անել: Ամեն մեկը կարող է այդպիսի հագուստ տանը կարել: Հաճախ դահուկային հագուստը հարմարեցնում են լեռնային պայմաններին, և այդ հագուստը շատ հարմար է, մանավանդ հեշտ և ճեղք բերվում:

Նալվարները կարող են լինել զանազան տեսակի, թե մահուդից և թե խակի կտորից (ըստ տարվա յեղանակների):

Լեռնային պայմաններում ավելի հարմար է հասարակ (փոչ գալիֆե, բրիչ, և այլն), ազատ և լայն շարպարը, վորը ծնկներից վեր բարձրացնելու հարմարություն պետք է ունենա:

Այդ շալվարը պետք է կարված լինի այսպես, որպի կողմից՝ աջ և ձախ կողքից պետք է ունենա ճեղքվածքներ, վորը պետք է վերջանա ծնկից մի քիչ բարձր՝ մեխանիկական կապով:

Շարժումների ժամանակ, շոգ յեղանակներին, շալվարի ներքեւի մասը կարելի յե քանդել, վեր բար-



ՆԿ. № 3. ԱԼՓԻՆԻԱՍԸ ԶՅՈՒՆԱՄԱՏ ԳԱԳԱԹԻՆ  
Թեք, ֆիբնային լանջով շարժվելու կարգը:


ձրացնել և ամրացնել այնտեղ՝ կոճակներով։ Ստացվում ե մի տեսակ կիսավարտիկ—տրուսիկ։ Այսպիսով հեղտանում ե ողի հոսանքը դեպի մարմինը, չափանց նվազում ե քրտնելը և հոգնածությունը, Բացի գրանից, յեղանակը փոխվելու դեպքում հեղտ ե ծածկել և պահպանել վոտքերը ցրտից, քամուց և անձրւից։

Վերենազգեստը պետք ե կարած լինի զինվորական խակի կտորից (կամ նման մի այլ կտորից), վորը պետք ե լինի լայն և արձակ։ Զմեռ ժամանակ և առհասարակ ցուրտ յեղանակներին տակից պետք ե հագնել տաք բաճկոնակ (սվիսեր)։ Լավ ե այդ նպատակով հարմարեցնել դարձյալ դահուկային վերնազգեստը։

Տակի հագուստեղենի՝ սպիտակեղենի համար սովորական լեռնային պայմաններում, մանավանդ Հայաստանում, միանգամայն պիտանի յեն սովորական կիսավարտիկները—տրուսիկները և մայկաները։ Բայց լեռնային սառցադաշտային մասերում անհրաժեշտ ե ունենալ նաև առնվազն մեկ զույգ տակի սովորական սպիտակեղեն և մի քանի զույգ (առնվազն յերկու զույգ) տաք սպիտակեղեն, ֆուֆայկա և այլն։

Արշամների ժամանոկ շատ լուրջ են կոչիկների հարցը։ Կարելի յե ունենալ յերկու տեսակ կոչիկներ՝ լեռնային և սովորական։ Լեռնային կոչված կոչիկներն ունեն մի շարք դրական հատկություններ։ Առաջինն այն ե, վոր նրանք ունենում են բավական հաստ ներբաններ (պաղու), վորոնք պահպանում են վոտքի թաթը տրուվելուց, և կոչիկի տակն ավելի ամուր ե լինում։ Համը լեղվակը (յերիզը) պահպանում է զուրը ներս ծծվելուց, իսկ առջևի կոշտ ծայրը պահ-

պանում ե վոտքերի մատերը քարերին կպցնելու դեպքում ջարդվածքներ ստանալուց: Այս կոշիկներն ունեն նաև բացառական հատկություններ՝ ծանր են, վերեկի մասը կոշտ յուժամբ կաշվեց և շատ աշխատանք ե պահանջվում այն ավելի լավ պատրաստելու համար:



ՆԿ. № 4. ԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՀԱԳՈՒՏ  
1. Վերնազգեստ. 2. Շալվար:

Բայց դրանից, լեռնային կոշիկների ներբանը պետք ե անպայման լավ տեսակի լինի, փորպեսզի տրիկոնները (տակի մեխերը) պահի, փորոնք շատ շուտ կարող են դուրս ընկնել, հետագայում կոշիկի ներբանը հեղտությամբ կթրջվի և շատ շուտ կմաշվի: Լեռնային պայմաններում ավելի լավ ե գործածել այս տեսակի կո-

շիկներ: Լեռնային պայմաններում, յերկաթյա ճանակիրի բացակայության դեպքում, խոշոր ծառայություն են մատուցում տրիկոնները: Նախկին Պրոլետատուրիզմի ընկերության կոշիկների վրայի տրիկոնները հաճախ անբավարար են լինում, շուտ նն վայր ընկնում, հեշտությամբ ծալվում են և նպաստում են ներբանի շուտ փշանալուն: Բայց և այնպիս տրիկոնների գործածությունը լեռներում շատ անհրաժեշտ եւ:

Մեզ մոտ՝ Հայաստանում, Արագածը և այլ լեռներ բարձրանալիս կարելի յե տրիկոններ չգործածել: Այդ հնարավոր և միայն ամառվա ամիսներին և մասսամբ գարնանն ու աշնանը: Զմուն պայմաններում տրիկոնների գործածությունը մեր լեռներում գարճյալ անհրաժեշտ եւ:

Վոտքերի սրունքները պահպանելու համար, մեծ մասամբ գործ են ածում բրդե կամ հասարակ գետրիներ և տոլաղներ (փաթաթաններ): Բրդե գետրիները շուտ են փոշոտվում ու կեղտառվում, հետո ձգվում են և շարժման ժամանակ սկսում են ընկնել, լավ չեն պահպանում վոտքերը թացությունից, ջուր են ծծում. իսկ հասարակ գետրիներն առավել ևս վատ են:

Տոլաղները (սրունքների փաթաթանները) համեմատաբար լավ են գետրիներից, մանավանդ թիթեն, բայց շարժման ժամանակ հաճախ շուտ բացվում են և դժբախտ դեպքերի պատճառ կարող են լինել: Մի շարք տարիների դիտողություններից մենք համոզվեցինք, վոր գետրիները պետք ե լինեն խիտ, ամուր կտրից, աստառով և մեխանիկական կոճակներով: Այսպիսի գետրիները պետք ե ընդգրկեն կոշիկների վերին մասերը և պահպանին վոտքերը վոչ մի-



ՆԿ 5. ԱԼԻՒՄԱՆՅԵՐՆ ՄՐԱՎԱՄԻ ՀՅՈՒՍՅԱՅԻՆ ԳԱՓԱԹԻ ՎՐԱ ԼՐԻՎ ՀԱՆԴՇԱՋԱՔՈՎ. ՀԼԻՆԻ, 1937 թ.

այն փողուց ու կեղտից, այլ նաև ջրից և մանը քարերից: Վոտքերը արորվելուց, սառեցնելուց և խոնավությունից պահպանելու համար անհրաժեշտ եւ ունենալ մի քանի դույզ բրդե գուլպաներ կամ բրդե փարաններ և հասարակ գուլպաներ կամ ամառային փաթաթաններ:

Յելնելով սեփական փորձից, պետք եւ ասել վորհովիտներում և համեմատաբար վոչ լեռնոտ տեղերում լավ եւ հագնել հասարակ գուլպաներ (վոչ բրդից), բայց անպայման հետեւ վոր կոշիկն ունենա միջատակ (ստելկա) և մեծ լինի, վորպեսզի չքրտնեցնի: Խիստ լեռնոտ վայրերում, քարքարոտ տեղերում, սասցադաշտերում պետք եւ հագնել բրդե գուլպաներ կամ բրդե փաթաթաններ, բայց անպայման հագնել մերկ վոտի վրա և վոչ թե հասարակ գուլպաների վրայից:

Այդ գեղքում վոտը սկզբում դեռ վորոշ անհարմարություն եւ զգում, մինչև վոր այդ սովորական եւ դառնում և անհարմարությունը շուտով անհետանում եւ վերելքի և վայրեջքի ժամանակ հարվածներն ու հրումներն ավելի փափուկ են լինում, վոտքերի քըրտինքը ծծվում եւ նրանց մեջ, և վոտներն ավելի լավ են պահպանվում այդպիսի բրդե գուլպանների մեջ, քան հասարակ՝ բարակ գուլպաներ հագնելու դեղքում: Վոտի փաթաթանների զործածությունն այն առավելությունն ունի, վոր յերթի պայմաններում վոտքը կարելի յեւ փաթաթել միշտ չոր ծայրով, իսկ փաթաթանի խոնավացած ծայրը կարելի յեւ վերքարձրացնել:

Այնուհետև անհրաժեշտ եւ, վոր ալպինիստն ունենատք գրլիսարկ (հարմար եւ ունենալ զինվորական ձմեռային գլխարկ կամ ֆիննական գլխարկ), ձեռնոցներ



ՆԿ. № 6 ԱՄԻՒՆԻՍՆԵՐԻ ԱՌԱՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՇԱԽԻ ՎԱՅՐԵԶԻ ԹԱՐԱՎԱԿ 1937 թ. ՀՈՒՆԻ

1-372/98

(բրդից) ձեռները ցրտից և սառչելուց պահպանելու համար, և մի զույգ հել մի մատնանի ձեռնոց: Տաք հագուստներ՝ բանկոնակ, (սվիտեր), տաք ֆուֆայկաներ. կարելի յև հանձնարարել նաև կարճ մորթե բանկոն, զամ քիմիական նյութերով ներծծված պլաշ:

### 3. ԱԼՊԻՆԻԱԾԼ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Առաջնակարգ նշանակություն ունի ալպինիստի համար բեռը տեղափոխելու գործը յերթի ժամանակ: Ալպինիստական բոլոր իրերի ճիշտ դասավորումը մեջքի պայուսակի մեջ՝ խոշոր նշանակություն ունի ճամբոր-դության հաջողության համար: Իր մեջքին յեղած իրերը տեղափոխելու համար ալպինիստին առաջադրում են մի շարք պարտադիր կանոններ, վորոնց պետք ե լավ գիտակ լինի ամեն մի ալպինիստ:

Այդ կանոնները հետեւյան են.

1. Բոլոր իրերը պետք ե դասավորել այնպես, վոր չխանգարվի որդանիզմի ֆունկցիաների նորմալ գործունեյությունը (շնչառությունը, արյան շրջանառությունը և այլն):

2. Բեռը չպետք ե խանգարի մարմինի նորմալ դրությունն արշավի տարբեր պայմաններում: Բեռը պետք ե նպատակահարմար դասավորված լինի ալպինիստի ամբողջ մարմնի վրա:

3. Իրերի դասավորությունը չպետք ե նեղություն պատճառի ալպինիստին շարժման ժամանակ:

4. Իրերը պետք ե այնպես դասավորել մեջքի պայուսակի մեջ, վոր հնարավոր լինի այդ իրերով աղատ ոգտվել յերթի ամբողջ բնֆացքում, և հեշտ լինի ցանկացած իրը հանել իր տեղից:



5. Բեռը չպետք է արորի ու ճնշի ալպինիստին մարմինը: Ցեթե բեռը ծանր է և բաղկացած է բազմատեսակ իրերից, ապա այդ գեղքում իրերը պետք են այնպես դասավորել ուսերի, գոտու և կողքերի վրա, վոր հեշտ լինի մեջքով տանել և չխանգարի ալպինիստի շարժմանը: Բեռը ճիշտ դասավորելու դեղքում ամբողջ սիստեմի ծանրության կենարոնը շատ մոտ է լինում ամբողջ իրանի նորմալ ծանրության կենարոնին, և ալպինիստը կարող է քայլել բեռնավորված վիճակում և ուղղահայաց գրությամբ, վորովհեակ նըման դասավորության դեղքում թե շնչառությունը և թե արյան շրջանառությունը մնում են նորմալ վիճակում:

Համաձայն այն փորձերի, վոր կատարվել են ռազմա-բժշկական ակադեմիայի պրոֆեսոր Իվանովի և ավատրիացի հիդրենիստ Տուրիվալդի զեկավարությամբ, առողջությանը չփասելու համար ալպինիստի բեռը պետք է լինի նրա կենդանի քաշի մոտավորապես մեկ յերրորդի չափ:

Ինարկե վորոշ կոնկրետ դեղքերում, նկատի ունենալով ալպինիստի ֆիզիկական կարողությունը և մարզքութիւնը դժվարությունները, այդ քանակը կարելի յե պակասեցնել, կամ ավելացնել:

Մեջքի պայուսակը (ռուկզակը) լայն պետք է լինի և զայ յերբեք յերկար, տակի մասում պետք է կարգած լինի յերկու փոկ (կամ կաշվից, կամ իրեն կտորից), կապոցն ամրացնելու համար: Պայուսակի կապերը պետք են ունենան յերկու զույգ վերջավորություն, վորոնցից մեկն ամրացնում են պայուսակի սերքեկի անկյուններին, իսկ մյուսը՝ փոկերին, այս-



ՆԿ. № 7. ԱԼՊԻՆԻՍՏԵՐՆ ԱՐԱՎԱՌԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱԳԱԹՆԵՐԻ ԹԱՐԹՈՅՈՒՄ. ԴԻՏՈՒՄ ԵՎ ՀՅՈՒՄԿԱՅԻՆ ԳԱԳԱԹ (4096 Ա.)

պիսով հնարավորություն ստեղծելով վողջ կապոցն ընդգրկելու:

Բեռն այս սիստեմով դասավորելու գեպքում հենաման կետեր են ծառայում ուսերը, աղղբերը և գավակը: Բեռը նստում է մեջքի յերկայնքով: Ծանրության կենտրոնը մոտենում է իրանի ծանրության կենտրոնին: Վորպեսզի բեռը միշտ անշարժ մնա, կապոցն ամրացնում են գոտկատեղին և միացնում են պայուսակի հետ (ներքին մասում): Այս գեպքում ստացվում է մի ազատ անցք պայուսակի և ալպինիստի մեջքի միջև, վորտեղից ոդը կարող է ազատ դուրս ու ներս անել և ապահով պահել մեջքը քրտնելուց, վորն անչափ վնասակար և շարժման ժամանակ:

#### 4. ՅԵՐԹԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՐԵՐ

Ալպինիստական արշավները պետք են ապահովված լինեն յերթային և մասնագիտական անհրաժեշտ իրերով: Յերթային իրերից անպայման պետք են ունենալ սերմոս կամ մեկ լիտրանոց սովորական ջրաման, բայց վորպեսզի ջուրը նրա մեջ յերկար ժամանակ սառը կամ տաք մնա, անհրաժեշտ են նրա վրա մահուդեն ծածկոց հագցնել:

Կերակուր յեփելու կամ պահածոներ տաքացնելու համար պետք են ունենալ մեկ հատ ալյումինի ափսե, այնուհետև՝ գլազ, դանակ, պատրարքակ և այլն:

Պետք են ապահովված լինել նաև վրանով. շատ հարմար են ունենալ փոքր վրան—մոտ 8 հոգու համար, պատճենություն պարկեր և այլն: Հայաստանի լեռներում




Նկ. № 8. ԱԼՊԻՆԻՍԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ

1. Հենակային մեխ ողլով, 2 և 4 մուրճիկներ (2-սառույցի համար՝ 4-ժայռերի համար) 5 և 3. Բնշպես խփել հենակային մեխները (կառտիլները). Վերինները՝ ձեւաչ չեն միջնունը՝ լավ է, ներքեւնը՝ բոլորից լավ է: 6. Կարարին:

ամառվա արշավների ժամանակ քննելու պարկերի վոչ  
մի կարիք չկա, վորովհետև խիստ ցրտեր չեն լինում,  
հաճախ կան բոլոր հնարավորությունները՝ լեռների  
կատարներին չգիշերելու, այլ գիշերը մոտակա բնակե-  
լի վայրերում անցկացնելու, կամ միայն վրաններով  
բավարարվելու: Քննելու պարկերի կարիքը կզգացվի  
միայն ձմեռվա ամիսներին: Այդ ամիսներին անպայ-  
ման կզացվի քննելու պարկերի կարիքը, և լավ կլինի,  
վոր այդ պարկերը պատրաստվեն բամբակի աստառով  
կամ մեջը բմբուլ լինելու տաք լինելու համար:

Սառցադաշերը և սառցապատ տարածություն-  
ները կարելի յե հաղթահարել միայն այն դեպքում,  
յերբ ալպինիստը զինված և մասնագիտական գործիք-  
ներով՝ սառցահատերով, լեռնալին գալացաններով  
(տլպենօսակներով), յերկարյա նաևկերով յեվ պարանով:  
Սառցահատները պետք ե լինեն պինդ նյութից, մա-  
սնավանդ ձմռան արշավների ժամանակ, յերբ ալպի-  
նիստը պետք ե անցնի սառուցների վրայով: Հայաս-  
տանի պայմաններում, ամառվա ընթացքում հաղվա-  
դեպ և միայն զգացվում սառցահատի կարիքը (Աղ-  
մավանի լեռներում և այլն):

Այդ կարիքն ավելի շուտ կզացվի ձմռան ար-  
շավների ժամանակ: Լեռնային գալացանները (ալպեն-  
շտոկներ) ամուր փայտից պատրաստված, սրածայր  
գավազաններ են, մետաղյա ծայրով: Լեռնային պայ-  
մաններում նրանք պիտանի կլինեն միայն այն դեպ-  
քում, յեթե պատրաստված լինեն պինդ նյութից,  
հակառակ դեպքում նրանք իրենց նշանակությունը  
բոլորովին կորցնում են: Կարելի և գործածել նաև  
սովորական, փայտից պատրաստված գավազաններ,



ՆԿ № 9. ԱԼՊԻՆԻՍՏԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ

1. Կրկնակի հանգույց իրանի վրա. 2. հասարակ (միապատիկ) հանգույց. 3. Յերկու ծայրերն ամրացնող հանգույց. 4. Կրկնա-  
կի հանգույց կապելու ձեռ. 5. Պատրաստի կրկնակի հանգույց.

յեթե նրանք պինդ են, բայց անպայման մետաղյա-  
սուր ծայր պետք ե ունենան:

Յերկարյա նանկերի կարիքը չափագանց մեծ Ա  
սաոցապատ լեռներում: Նրանց կառուցվածքը և վորա-  
կը մեծ նշանակություն ունի ձյունապատ ու սաոցա-  
պատ լեռներում անվտանգ փոխադրություններ անե-  
լու համար: Անվտանգության տեսակետից մեծ նշա-  
նակություն ունի կանոնավոր հագնելը, այսինքն,  
այդ ճանկերը կոչիկների վրա ճիշտ և պինդ ամրա-  
ցնելը:

Մեր յերիտասարդ ալպինիստների խոշոր թերու-  
թյուններից մեկն այն ե, վոր նրանք զեռես լիովին-  
կամ նույնիսկ անհրաժեշտ չափով չեն յուրացրել ալ-  
պինիզմի տեխնիկան: Հաճախ լեռնային արշավաները  
լավ չեն նախապատրաստվում, չեն հրահանգավորվում  
և անհրաժեշտ լեռնային իրերով չեն ապահովվում.  
Վորը բղխում ե նրանից, վոր մեր սկսնակ ալպինիստ-  
ները չեն տիրապետում ալպինիզմի կանոններին և  
ծանոթ չեն նրա տեխնիկային:

Ահա թե ինչու պետք ե լուրջ ուսումնասիրել  
ալպինիզմի տեխնիկան և տիրապետել այն:

Այդ անելով՝ բոլորն ավելի կսիրեն ալպինիզմը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0977657

10 СЕНТЯБРЬ 1937 423

Файл № 40 Կոդ.

1  
3727

В. ДАРЬИН

СНАРЯЖЕНИЕ

АЛЬПИНИСТА

Неважно вспомнило по делам французского и  
германского СНК Арие ССР,

ПРЕДСТАВЛЯЮЩИЕ

ПОСЛЕДАТЬ

1937 г.